



*Կալիֆորնիայի հաշմանդամների պահպանության և իրավունքների
պաշտպանության համադարձ
Անվճար հեռախոսահամար՝ (800) 776-5746*

Ի՞նչ է Ընդլայնում տարեցների համար / MAGI Medi-Cal ծրագիրը

Մայիս 2016թ., Հր. #5551.10

Մատչելի բժշկական ծառայությունների մասին օրենքը (Affordable Care Act - ACA) (հայտնի է նաև որպես Օբամայի բժշկական խնամք) մեծացրել է այն մարդկանց քանակը, ովքեր կարող են ստանալ Medicaid (Medi-Cal Կալիֆորնիայում): “Medi-Cal-ի ընդլայնումը տարեցների համար” կամ Medi-Cal-ը “երեխա չունեցող տարեցների” համար համարվում է այն ծրագրի մասը, որն այժմ կոչվում է “MAGI” Medi-Cal ըստ ACA օրենքի: “MAGI” Medi-Cal նշանակում է ցանկացած Medi-Cal ծրագիր, որն օգտագործում է MAGI (փոփոխված և ճշգրտված համախառն եկամուտ) տվյալը՝ Medi-Cal ծրագրի ֆինանսական պահանջներին համապատասխանությունը որոշելու համար:

Ո՞վ է համապատասխանում տարեցների համար ընդլայնված Medi-Cal ծրագրին:

Դուք կարող եք օգտվել Medi-Cal ծրագրից տարեցների համար ընդլայնված նոր Medi-Cal ծրագրի շրջանակում, եթե.

- Դուք 19-ից 64 տարեկան եք,
- Ձեր MAGI եկամուտը ցածր է աղքատության դաշնային սահմանաչափի ([FPL](#))՝ 138%-ից,
- Դուք հղի չեք,

Էջ 2՝ 6-ից

- Դուք չեք ստանում Medicare,
- Դուք արդեն չունեք ծախսերը չկիսող Medi-Cal:

Ի՞նչպես եմ ճշտում, արդյոք իմ MAGI եկամուտը ցածր է [138%-ից](#):ⁱⁱ

Դուք պարտավոր չեք այդ տվյալն ինքնուրույն ստանալ: Դուք կարող եք Medi-Cal-ի շրջանային գրասենյակում կամ մի շարք այլ վայրերում ներկայացնել “անհատական պարզեցված հայտ” MAGI Medi-Cal-ի համար Covered California-ի միջոցով: Անհատական պարզեցված հայտը կարող եք ներկայացնել առցանց՝ Covered California-ի կայքէջում: Եթե նպաստների համար հայտը ներկայացնեք շրջանային Medi-Cal-ի կայքէջում, այն Ձեզ կտեղափոխի Covered California-ի կայքէջ, որտեղ կկարողանաք դիմել MAGI Medi-Cal-ի համար:

Կա՞ն կանոններ այն մասին, թե ես որքան գումար կամ գույք կարող եմ ունենալ և ստանալ տարեցների համար ընդլայնված Medi-Cal:

Այո, սակայն սրանք տարբերվում են pre-ACA Medi-Cal-ից: Pre-ACA Medi-Cal-ն ունի շատ խիստ սահմանափակումներ Ձեր ունեցած եկամտի և գույքի վերաբերյալ: MAGI Medi-Cal-ն օգտագործում է եկամուտը հաշվարկելու այլ եղանակ և անհատին թույլ է տալիս ունենալ տարեկան մինչև 16,242 ԱՄՆ դոլարի MAGI եկամուտ: Դա կազմում է դաշնային աղքատության սահմանաչափի 138%-ը: Սակայն MAGI Medi-Cal-ի դեպքում չկան չհարկվող եկամուտներ կամ եկամտի նվազեցումներ բացի մի քանի նվազեցումներից, որոնք օգտագործվում են՝ որոշելու Ձեր MAGI-ի գումարը: Եվ ի տարբերություն pre-ACA Medi-Cal-ի՝ MAGI [Medi-Cal-ի](#)ⁱⁱⁱ համար գույքի որևէ ստուգում *չի* անցկացվում: Դա նշանակում է, որ Դուք կարող եք ունենալ pre-ACA [Medi-Cal-ի](#)^{iv} մեկ անձի համար 2,000 ԱՄՆ դոլարից/մեկ գույզի համար 3,000 ԱՄՆ դոլարից ավել միջոցների սահմանափակումներ:

Էջ 3՝ 6-ից

Ի՞նչ է պատահում, եթե ես այժմ կիսում եմ Medi-Cal-ի ծախսերը: Կարո՞ղ եմ փոխել ծրագիրս և անցնել տարեցների համար ընդլայնված Medi-Cal-ի:

Այո: Դուք կարող եք կապվել Ձեր Medi-Cal-ի տեղական շրջանային գրասենյակի հետ և խնդրել նրանց ստուգել՝ արդյո՞ք Դուք այժմ համապատասխանում եք MAGI Medi-Cal-ի պահանջներին առանց ծախսերը կիսելու: Շրջանային վարչությունը կստուգի նաև, արդյո՞ք Դուք Ձեր տվյալների տարեկան վերանայման ժամանակ համապատասխանում եք MAGI Medi-Cal-ին: Շրջանային վարչությունը Ձեզ կհատկացնի MAGI Medi-Cal, եթե Դուք համապատասխանեք ծրագրին:

Ի՞նչ ծառայություններ կարող եմ ստանալ տարեցների համար ընդլայնված Medi-Cal-ով:

Դուք կարող եք ստանալ սովորական Medi-Cal ծրագրով առաջարկվող բոլոր ծառայությունները՝ ներառյալ բուժքույրական խնամք, ներտնային օժանդակման ծառայություններ (In Home Supportive Services - IHSS) և այլ երկարաժամկետ խնամքի ծառայություններ **առանց գույքի ստուգման**։^v Բացի այդ, Medi-Cal-ի կառավարվող խնամքի ծրագրերով և մտավոր առողջության/հոգեկան **առողջության**^{vi} շրջանային ծրագրերով Դուք կարող եք ստանալ թմրանյութերի օգտագործման դեմ և մտավոր առողջության պահպանման ծառայություններ: Եթե Դուք ցանկանում եք տնային և համայնքային հրաժարականի ծառայություններ (HCBS), կարող եք դիմել pre-ACA Medi-Cal ծրագրի համար Medi-Cal -ի շրջանային գրասենյակի միջոցով: Դա կարող եք անել՝ լրացնելով SAWS 2 Plus **ձևաթուղթ**:^{vii}

Ի՞նչ ռեսուրսներ կան, եթե ես ունենամ ավելի շատ հարցեր:

Այս փաստաթղթի վերջում մենք նշել ենք ինտերնետային ռեսուրսների ցանկը, որոնք կարող են օգտակար լինել հետագա ուսումնասիրությունների համար: Բացի այդ, Medi-Cal-ի Ձեր շրջանային գործակալությունը, <http://www.dhcs.ca.gov/services/medi->

Էջ 4՝ 6-ից

[cal/Pages/CountyOffices.aspx](http://www.coveredca.com/cal/Pages/CountyOffices.aspx), և Covered California-ն, www.coveredca.com, 1-800-300-1506, կարող են պատասխանել հարցերին:

Հետևյալ կազմակերպությունները կարող են օգնել պաշտպանության հարցում.

- Disability Rights California, www.disabilityrightsca.org, 1-800-776-5746, կամ
- իրավաբանական ծառայություններ մատուցող Ձեր տարածքային կազմակերպությունը: Health Consumer Alliance-ը նշում է այդ կազմակերպությունների ցանկը հետևյալ կայքէջում.
<http://healthconsumer.org/index.php?id=partners>.

Մենք ցանկանում եք լսել Ձեր կարծիքը: Խնդրում ենք պատասխանել մեր հրապարակումների մասին հետևյալ հարցման հարցերին և տեղեկացնել մեզ, թե ինչպես ենք մենք աշխատում:

<https://docs.google.com/forms/d/1d6ezTl2M5UMAWU66exLbc1SQ9wDPzvtuS3AGR4-cgwE/viewform?c=0&w=1>

Կալիֆորնիայի հաշմանդամների իրավունքներով զբաղվող կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս

<http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>:

ⁱ Թոշակառու քաղաքացիների ազգային օրենքի կենտրոնը գրել է օգտակար նյութ Կալիֆորնիայում Medicaid ծրագրի ընդլայնման մասին, որը լուծում է եկամտային համապատասխանության խնդիրը: Տե՛ս <http://nslcarchives.org/wp-content/uploads/2013/11/ICA-Eligibility-Brief-4.pdf>. “MAGI բանաձևը հաշվի չի առնում եկամտի որոշ տեսակներ, որոնք

են օրինակ վետերանների նպաստները, երեխայի համար ստացած նպաստը և կրթական նպատակներով օգտագործվող կրթաթոշակները, դրամաշնորհները և պարզևավճարները: Ընդլայնված Medi-Cal-ը թույլ կտա կատարել նաև եկամտի այլ նվազեցումներ, որոնք սովորական Medi-Cal ծրագրի եկամտային հաշվարկներով չեն թույլատրվում, դրանք են օրինակ վճարված ալիմենտները և առանց հարկերի նվազեցման այնպիսի ծախսերի վճարված գումարները, որոնք են երեխայի խնամքի կամ պաշտոնաթողության վճարները (չնայած հակառակ դեպքում այն չի թույլատրի սովորական A&D FPL նվազեցումները բժշկական ապահովագրության ծախսերի համար": Բերկլիի Կալիֆորնիական համալսարանի լաբորատոր կենտրոնն ունի մեկ էջանոց տեղեկատու թերթիկ, որում պարզ բացատրված է, թե ինչպես հաշվել MAGI-ն: Այն կարելի է գտնել այստեղ.

http://laborcenter.berkeley.edu/healthcare/MAGI_summary13.pdf. [“Return to Main Document”](#)

ii MAGI-ի մասին մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Բժշկական ծառայությունների մասին ազգային օրենքի ծրագրի “Իրավապաշտպանի ուղեցույցը MAGI-ի վերաբերյալ” այստեղ. <http://www.healthlaw.org/publications/agmagi> [“Return to Main Document”](#)

iii Pre-ACA Medi-Cal-ը ճշտում է տեղեկություններ Ձեր գույքի վերաբերյալ, և եթե Դուք ունեք չափից շատ գույք, Դուք չեք համապատասխանի Medi-Cal ծրագրի պահանջներին: MAGI Medi-Cal-ով Ձեր գույքը ստուգման ենթակա չէ: [“Return to Main Document”](#)

iv <http://nsclarchives.org/wp-content/uploads/2013/11/1CA-Eligibility-Brief-4.pdf> [“Return to Main Document”](#)

v Կալիֆորնիա նահանգը շրջաններին տեղեկացրել է, որ ընդլայնված MAGI ծրագրում ընդգրկված տարեցները, ովքեր ունեն բուժքույրական ծառայությունների կարիք, կարող են ստանալ այդ ծառայությունները MAGI-ի համապատասխանությամբ, առանց գույքի ստուգման.

<http://www.dhcs.ca.gov/services/medi->

cal/eligibility/Documents/MEDIL2014/MEDILI14-06.pdf: Կալիֆորնիա նահանգը շրջաններին տեղեկացրել է նաև, որ ընդլայնված MAGI ծրագրում ընդգրկված տարեցները համապատասխանում են նաև համայնքային LTSS ծրագրին. <http://www.dhcs.ca.gov/services/medical/eligibility/Documents/MEDIL2014/MEDILI14-11.pdf>: Չնայած MAGI Medi-Cal-ի համար չի պահանջվում հաշմանդամության սահմանում, սակայն LTSS ծառայությունների համար Դուք պետք է բավարարեք բժշկական անհրաժեշտության չափանիշները: [“Return to Main Document”](#)

^{vi} Տե՛ս

<http://www.dhcs.ca.gov/formsandpubs/laws/Documents/Pending%20SPA%2013-038%20not%20ADA.pdf>,

<http://www.dhcs.ca.gov/formsandpubs/Documents/MMCDAPLsandPolicyLetters/APL2013/APL13-021.pdf>: [“Return to Main Document”](#)

^{vii} <http://nsclarchives.org/wp-content/uploads/2013/11/1CA-Eligibility-Brief-4.pdf> [“Return to Main Document”](#)